



Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան

Գասասենյակից մինչև յուրացում՝ վարկի միջոցով

Գագիկ Բաբախանյանի ապակե ջերմատունը, որ Երևանից ոչ շատ հեռու գտնվող Գեղանիստ համայնքում է, 470 քառակուսի մետր տարածք է զբաղեցնում: Նրա բազմանդամ ընտանիքը՝ մայրը, կինը և երեք որդիները, որոնցից մեկն ամուսնացած է, ապրում են մի մեծ տան մեջ և բոլորն էլ լիովին ներգրավված են իրենց հողակտորի մշակման գործում: Ավելի շատ բերք և մեծ եկամուտ ունենալու ցանկությունը Գագիկին ստիպեց դիմել ՀՄՀ-Հայաստանին և ստանալ 6 միլիոն դրամի վարկ, որով նա լրացուցիչ 200 քառակուսի մետրով կրնդայնի իր ջերմատունը, կնորոգի ջեռուցման և օդափոխման համակարգերը և ապակյա ծածկը: Գագիկ Բաբախանյանը քաջատեղյակ է ՀՄՀ-Հայաստանի հետ համագործակցության բոլոր հնարավոր եղանակների մասին: Նա առաջիններից էր, ով մասնակցեց Ջրից դեպի շուկայի վերապատրաստման դասընթացներին, ներդրեց ոռոգման կաթիլային համակարգ, համագործակցելով ԷյՍիԴիԱյ/ՎՕԿԱ-ի հետ սկսեց փորձարկել ոչ ավանդական մշակաբույսեր՝ բրոկկոլի, կոլրաբի, քաղցր եգիպտացորեն: Այժմ նա փորձում է անցնել օրգանական մշակության:

«Ես խիստ հետաքրքրված եմ ՀՄՀ-Հայաստան ծրագրով և այն ամենով, ինչ այն առաջարկում է ֆերմերին: Մեր օրերում գյուղատնտեսությունը արագ տեմպերով զարգանում է և եթե հողիցդ մեծ եկամուտ ես ակնկալում, պետք է պատրաստ լինես յուրացնել նորությունները: Ես մեծ ընտանիք ունեմ և բոլորս էլ քրտնաջան աշխատում ենք լավ բերք և եկամուտ ստանալու ակնկալիքով», -ասում է Գագիկը:

Իր վարկը Գագիկը ստացել է շուրջ 3 ամիս առաջ Կոնվերս բանկից 10 տոկոս տոկոսադրույքով: Շուտով նա կավարտի վերանորոգման աշխատանքները և ակնկալում է արդեն այս ձմեռ լիովին շահագործել ընդլայնված ջերմատունն ու նորոգված ջեռուցման համակարգը: Լուիկն ու վարունգը նա կտնկի արդեն հունվարին, մինչդեռ անցած տարիներին նա այդ բանն անում էր փետրվարի վերջին:



Ջերմատան նորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են



Այգու խնամքով զբաղված է ողջ ընտանիքը. հայրը և որդին աշխատում են ջերմատանը

Այսպիսով նա հնարավորություն կստանա իր բերքը հավաքել վաղ գարնանը և վաճառել այն ավելի քանկ գնով. մեկ կիլոգրամը 1000 դրամով՝ 600-ի փոխարեն: «Այսպիսով, այս տարի ես ակնկալում եմ, որ իմ եկամուտը շատ ավելի բարձր կլինի՝ անցած տարիների համեմատ», -ասում է նա:

Ներկայումս ՀՄՀ-Հայաստանն ունի վարկային ծրագրի շուրջ 125 շահառու և արդեն իսկ տեղաբաշխել է վարկային պորտֆելի առաջին մասնաբաժինը, որը կազմում է 1.5 միլիոն դոլար: Վարկերը հիմնականում ուղղվում են այգեգործությանը, ջերմատների, գյուղտեխնիկայի, ոռոգման համակարգերի նորացմանը, նոր սերմերի և սերմացուների ձեռք բերմանը, գյուղատնտեսական մեքենաների գնմանը, անասնապահությանն ու վերամշակմանը: